ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ՊԱՐՈՆ Գ.ՄԻՐԻՋԱՆՅԱՆԻՆ

ԶԵԿՈՒՅԱԳԻՐ

Զեկուցում եմ Ձեզ, որ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Գեղարքունիքի և Տավուշի մարզային բաժնի Մարտունի-Վարդենիս տարածաշրջանի բաժանմունքի աշխատանքների կազմակերպման համար 09.07.2021թ-ին <<Մարտունու Սգմա>> ԲԲԸ-ի հետ կնքվել է տարածքի վարձակալության պայմանագիր, որը ստացել է նոտարական վավերացում և այն ենթակա է ՀՀ ԱԳԿ-ում պետական գրանցման:

Ներկայացնում եմ ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագիրը, նոտարի կողմից տրված ծառայությունների մատուցման արձանագրությունը և ՀՀ ԱԳԿ-ի ծառայությունների մատուցման արձանագրությունը:

Խնդրում եմ Ձեր հանձնարարականը Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Ֆինանսական բաժնին՝ կատարել վերը նշված փոխանցումները:

Առդիր՝ «6» թերթ:

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ

Recoverable Signature

X

ՍԵՎԱԿ ՍԻՄՈՆՅԱՆ

Signed by: SIMONYAN SEVAK 3207740065

ՍԵՎԱԿ ՍԻՄՈՆՅԱՆ

26.07.2021թ.

Նոտարական ակտի կոդ: 773-20210709-37-5223568
Նոտարական ակտի գաղտնագիր: 80GK4J

ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
Գեղարքունիք Սևան ք. երկու հազար քսանմեկ թվականի հուլիսի ինն 09/07/2021

«**ՄԱՐՏՈՒՆՈՒ ՍԻԳՄԱ**» Բաց բաժնետիրական ընկերությունը, հասցե՝ ք.Մարտունի ԵՐԵՎԱՆՅԱՆ / 74, գրանցման համար՝ 76.120.00215, ՀՎՀՀ՝ 08201117, ի դեմս տնօրեն՝ **ԱԼՎԻՆԱ ՀԱՄԼԵՏԻ ԴԱՐԲԻՆՅԱՆԻ**, ծնված՝ 01/01/1975թ., ՀԾՀ՝ 5101750557, անձնագիր՝ 000547554, տրված՝ 043-ի կողմից 03/09/2013թ.-ին, հաշվառված՝ ՄԱՐՏՈՒՆԻ ՆԱՐԵԿԱՑԻ Փ. 1 ՓԿՂ. / 1 հասցեում, այսուհետ՝ «**Վարձատու**» մի կողմից,
Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ, հասցե՝ ք.Երևան, Հալաբյան 41ա, ՀՎՀՀ՝ 01223338, որի անունից ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի պարտականությունների ժամանակավոր կատարող, արդարադատության գնդապետ Լ. Բալյանի կողմից 17/06/2021թ.-ի լիազորագրով հանդես է գալիս Գեղարքունիքի և Տավուշի մարզային բաժնի Մարտունի-Վարդենիս բաժանմունքի պետ, արդարադատության փոխգնդապետ **ԳԱԳԻԿ ՎՈՅԿՈՎԻ ՏԵՐ-ԵՂՈՅԱՆԸ**, ծնված՝ 10/08/1974թ-ին, ՀԾՀ՝ 2008740285, անձնագիր՝ 008486292, տրված՝ 043-ի կողմից, 25/07/2016թ-ին, բնակության հասցե՝ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ, ՄԱՐՏՈՒՆԻ, ԵՐԵՎԱՆՅԱՆ Փ., 88 S հասցեում, այսուհետ՝ «Վարձակալ», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետեւյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով՝ Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել ՀՀ Գեղարքունիքի մարզ, համայնք Մարտունի, Երևանյան փողոց, 74 /յոթանասունչորս/հասցեում գտնվող 713,8 /յոթ հարյուր տասներեք ամբողջ ութ/ քմ մակերեսով վարչական շենքի 2-րդ հարկից 103,9 /հարյուր երեք ամբողջ ինը/ քմ մակերեսով տարածքը՝ համաձայն սույն պայմանագրին կցվող հատակագծի գծանշման, (այսուհետ՝ Օբյեկտ), իսկ Վարձակալը պարտավորվում է Օբյեկտը օգտագործել իր աշխատանքները կազմակերպելու համար՝ սույն պայմանագրի նշանակության համապատասխան և վճարել սույն պայմանագրով որոշված գինը:
1.2. Սույն պայմանագիրը կնքվում է անորոշ ժամանակով:
1.3. Վարձատունը վարձակալության հանձնվող Օբյեկտի սեփականատերն է, ինչը հաստատվում է 26/07/2019թ.-ի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 26072019-05-0035 վկայականով:
1.4. Սույն պայմանագրի կնքման պահին Օբյեկտը վաճառված, ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման տրված չէ, արգելանքի տակ չէ, գրավադրված չէ, ինչը հավաստվում է ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 21/06/2021թ.-ի 21062021-05-0040 միասնական տեղեկանքով:
1.5. Վարձակալության հանձնված Օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չէ սույն պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Վարձատուն իրավունք ունի՝
2.1.1. պահանջել Վարձակալից՝ Օբյեկտն օգտագործել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակության համապատասխան
2.2.1. Օբյեկտը Վարձակալին հանձնել հանձնման-ընդունման ակտով՝ սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 1 (մեկ) օրվանից ոչ ուշ: Հանձնման-ընդունման ակտն ստորագրում են Վարձատուն և Վարձակալը:
2.2.2. Օբյեկտը Վարձակալին տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխանող վիճակում.
2.2.3. ոչ ուշ, քան երկու ամիս առաջ, Վարձակալին գրավոր տեղեկացնել Օբյեկտն ազատելու անհրաժեշտության մասին՝ կապված շենքը հիմնական վերանորոգման կանգնեցնելու կամ քաղաքաշինական նկատառումներով այն քանդելու վերաբերյալ սահմանված կարգով ընդունված որոշումների հետ:

2.3. Վարձակալն իրավունք ունի՝
2.3.1. պահանջել Վարձատուից՝ սույն պայմանագրի
2.2.1. կետում սահմանված ժամկետում իրեն տրամադրել Օբյեկտը.
2.3.2. Վարձատուից պահանջել՝ իրեն տրամադրելու Օբյեկտին վերաբերող փաստաթղթերը:
2.4. Վարձակալը պարտավոր է՝
2.4.1. Օբյեկտն օգտագործել պայմանագրի պայմաններին և Օբյեկտի նշանակությանը համապատասխան.
2.4.2. ժամանակին մուծել Օբյեկտն օգտագործելու համար սույն պայմանագրի 3-րդ կետում նախատեսված վճարը (վարձավճարը).
2.4.3. սույն պայմանագրից ծագող իրավունքները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում գրանցել պետական լիազորված մարմնում: Նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված ծախսերն իրականացնել իր միջոցների հաշվին.
2.4.4. ժամանակին կատարել վարձակալված Օբյեկտի ընթացիկ վերանորոգումը.
2.4.5. ապահովել Օբյեկտի ինժեներական ցանցերի, հաղորդակցության ուղիների և սարքավորումների պահպանվածությունը.
2.4.6. առանց Վարձատուի գրավոր համաձայնության Օբյեկտում չկատարել փակ և բաց լարանցումներ և չանցկացնել հաղորդակցության ուղիներ, չանել վերանախագծումներ և վերասարքավորումներ: Վարձակալի կողմից Օբյեկտի նախնական տեսքը խեղաթյուրող ինքնակամ վերակառուցումներ, պատերի, միջնապատերի կամ ծածկերի ամբողջականության խախտում, ցանցերի վերափոխում կամ անցկացում հայտնաբերելու դեպքում դրանք պետք է վերացվեն, իսկ տարածքը բերվի իր նախկին տեսքին՝ Վարձակալի հաշվին և Վարձատուի որոշած ժամկետում.
2.4.7. վարձակալած Օբյեկտի տարածքներում պահպանել սանիտարահակահամաճարակային կայանների, պետհրշեջվերահսկողության մարմինների պահանջները, ինչպես նաև բոլոր այն կանոնները և նորմերը, որոնք գործում են Վարձակալի գործունեության ձևերի ու վարձակալած Օբյեկտի նկատմամբ.
2.4.8. Վարձատուի որոշած ժամկետներում ազատել տարածքները՝ կապված Օբյեկտի (կամ դրա մի մասի) կառուցվածքների (կոնստրուկցիաների) վթարային վիճակի, Օբյեկտը հիմնական վերանորոգման ենթարկելու կամ քաղաքաշինության նկատառումներով այն քանդելու հետ.
2.4.9. Օբյեկտը և դրան հարող տարածքը պահպանել պատշաճ սանիտարական վիճակում, ինչպես նաև մշտապես պատշաճ վիճակում պահպանել Օբյեկտի ճակատային մասերը.
2.4.10. Վարձատուին անմիջապես տեղեկացնել Օբյեկտի ամեն մի վնասվածքի, վթարի կամ այլ իրադարձության մասին, որը վնաս է հասցրել (կամ սպառնում է հասցնել) Օբյեկտին, և ժամանակին ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները վտանգի կանխարգելման համար, ինչպես նաև Օբյեկտը հետագայում քանդելու կամ վնասելու դեմ.
2.4.11. առանց Վարձատուի գրավոր համաձայնության չկնքել գրավի, ենթավարձակալության պայմանագրեր և չմտնել գործարքների մեջ (իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի մեջ Օբյեկտի կամ դրա մի մասի վարձակալության իրավունքի ներդրում).
2.4.12. ապահովել Վարձատուի և նրա ներկայացուցիչների անարգել մուտքն Օբյեկտ՝ դրա զննման և ստուգման համար.
2.4.13. ոչ ուշ, քան երկու ամիս առաջ, Վարձատուին գրավոր տեղեկացնել վարձակալված Օբյեկտի սպասվելիք ազատման մասին՝ կապված ինչպես պայմանագրի ժամկետն ավարտվելու, այնպես էլ դրա վաղաժամկետ դադարեցնելու հետ.
2.4.14. Օբյեկտն ազատելիս այն սարքին վիճակում հանձնել ակտով՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը.
2.4.15. սահմանված ժամկետում կատարել Վարձատուի կարգադրությունները՝ ուղղված իր գործունեության ընթացքում առաջացած այնպիսի իրավիճակների վերացմանը, որոնք վտանգի տակ են դնում Օբյեկտը, իսկ վարձակալված Օբյեկտից դուրս՝ բնապահպանական և սանիտարական իրավիճակը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ՝

3.1. Պայմանագրի կնքման պահին Օբյեկտի համար ամսական վարձավճարը սահմանվում է 140000 /հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ, որը ներառում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը:
3.2. Վարձակալը վարձավճարը վճարում է անկանխիկ՝ Վարձատուի Արարատբանկ ՓԲԸ 1510022686550100 հաշվեհամարին՝ պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից յուրաքանչյուր ամսվա համար մինչև հաջորդ ամսվա 25-ը (քսանհինգ)՝ հանձնման-ընդունման

արձանագրության հիման վրա:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ՝

4.1. Վարձակալը պայմանագրի 3 կետում նախատեսված վարձավճարի կետանցի դեպքում յուրաքանչյուր օրվա համար Վարձատուին վճարում է տույժ՝ չվճարված վարձավճարի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:
4.2. Տույժի մուծումը կողմերին չի ազատում պայմանագրով նրանց վրա դրված պարտավորությունները կատարելուց:
4.3. Եթե Վարձակալը պայմանագիրը դադարելուց հետո չի վերադարձրել Օբյեկտը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ, ապա Վարձատուն իրավունք ունի վարձավճար պահանջել կետանցի ամբողջ ժամանակահատվածի համար: Եթե նման վճարն ամբողջովին չի մարում Վարձատուին պատճառված վնասները, նա կարող է պահանջել հատուցելու դրանց մնացած մասը: Վարձատուն պատասխանատվություն չի կրում Օբյեկտի այն թերությունների համար, որոնք նա նշել է սույն պայմանագիրը կնքելիս, կամ նախապես հայտնի է եղել Վարձակալին: Օբյեկտի այն թերությունների համար, որոնք նա չի նշել սույն պայմանագիրը կնքելիս, կամ նախապես հայտնի չի եղել Վարձակալին, Վարձատուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 3.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:
4.5. Սույն պայմանագրի 2.2.1 կետով սահմանված ժամկետի խախտման դեպքում յուրաքանչյուր օրվա համար Վարձատուից հօգուտ Վարձակալի գանձվում է տույժ՝ պայմանագրի 3.1 կետով սահմանված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5. ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ՕԲՅԵԿՏԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐԸ՝

5.1. Վարձակալած Օբյեկտից Վարձակալի կատարած բաժանելի բարելավումները համարվում են նրա սեփականությունը:
5.2. Վարձակալի կողմից կատարած վարձակալած Օբյեկտից անբաժանելի բարելավումների արժեքը չի հատուցվում:

6. ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ՝

6.1. Վարձատուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Վարձակալը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վարձատուի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վարձատուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:
6.2. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Վարձակալը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Վարձակալը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով 3/6 փոխհատուցել իր մեղքով Վարձակալի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:
6.3.Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական նհատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի

պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմ
փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել՝ նախքան Հայաստա
Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համ
անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:
6.4.Եթե տվյալ տարում նախատեսված չեն կամ նախատեսված են ավելի քիչ ֆինանսակ
միջոցներ, քան պայմանագրի գինն է, ապա կողմերի հետագա պարտավորությունն
շարունակվում են համաձայնագիր կնքելու միջոցով:
6.5.Եթե Վարձակալը պայմանագրով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագ
արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված, և պայմանագրով սահմանվ
վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Վարձակալը Վարձատուին է տրամադրո
իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում, պայմանագ
արդյունքը հանձնելու փաստն ամրագրվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելո
փաստաթղթի կազմման ամսաթիվը:
6.6.Վարձակալը սույն պայմանագրում նախատեսված վարձավճարի կետանցի դեպքու
յուրաքանչյուր օրվա համար Վարձատուին վճարում է տույժ՝ չվճարվածվարձավճարի 0.05 (զրո
ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով: Վարձավճարի չվճարման յուրաքանչյու
ժամկետանց օրվա համար Վարձակալը վճարում է տույժ պայմանագրի գնի 0,05 տոկոսի
չափով: Ընդ որում, տույժը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված
մասի գնի նկատմամբ: Տույժի վճարումը կողմերին չի ազատում պայմանագրով նրանց վրա
դրված պարտավորությունները կատարելուց:
6.7.Եթե Վարձակալը պայմանագիրը դադարելուց հետո չի վերադարձրել Օբյեկտը կամ այն
վերադարձրել է ժամկետի խախտմամբ, ապա Վարձատուն իրավունք ունի վարձավճար
պահանջել կետանցի ամբողջ ժամանակահատվածի համար: Եթե նման վճարն ամբողջովին չի
մարում Վարձատուին պատճառված վնասները, նա կարող է պահանջել հատուցելու դրանց
մնացած մասը:
6.8.Եթե պայմանագրի կնքումից հետո ի հայտ են գալիս թերություններ, որոնք Վարձատուն չի
նշել սույն պայմանագիրը կնքելիս, կամ նախապես հայտնի չի եղել Վարձակալին, Վարձատուից
գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 3.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ
հինգ տասնորդական) տոկոսի չափով: Վարձատուն պատասխանատվություն չի կրում Օբյեկտի
այն թերությունների համար, որոնք նա նշել է սույն պայմանագիրը կնքելիս, կամ նախապես
հայտնի է եղել Վարձակալին:
6.9. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին
պարտավորություններ առաջացնող գնումների դեպքում պայմանագրով նախատեսված
կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է այդ գործարքի՝
լիազորված մարմնի կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔԵՐ՝

7.1. Վարձատուի պահանջով՝ վարձակալության պայմանագիրը կարող է դատարանով
վաղաժամկետ լուծվել, եթե Վարձակալը՝
7.1.1. Օբյեկտն օգտագործել է սույն պայմանագրի պայմանների կամ դրա նշանակության
էական կամ բազմակի խախտումներով.
7.1.2. էականորեն վատթարացրել է Օբյեկտի վիճակը.
7.1.3. սույն պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո երկու անգամից
ավելի չի մուծել վարձավճարը.
7.1.4. սույն պայմանագրով սահմանված ժամկետներում չի կատարել Օբյեկտի ընթացիկ
վերանորոգումը.
7.1.5. առանց Վարձատուի գրավոր համաձայնության կնքել է գրավի, ենթավարձակալության
պայմանագրեր և մտել է գործարքների մեջ (իրավաբանական անձի կանոնադրական
(բաժնեհավաք) կապիտալի մեջ Օբյեկտի կամ դրա մի մասի վարձակալության իրավունքի 4/6
ներդրում):
7.2. Վարձակալի պահանջով՝ սույն պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծվել,
եթե՝
7.2.1. Վարձատուն Վարձակալի օգտագործմանը չի տրամադրել Օբյեկտը կամ խոչընդոտներ է
ստեղծել Օբյեկտը պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանը համապատասխան
օգտագործելու համար:
7.2.2. Վարձակալին հանձնված Օբյեկտն ունի դրա օգտագործմանը խոչընդոտող թերություններ,
որոնց մասին Վարձատուն չի նշել պայմանագիրը կնքելիս, որոնք նախապես հայտնի չեն եղել
Վարձակալին, և վերջինս չպետք է հայտնաբերեր պայմանագիրը կնքելիս:
7.2.3. Հանգամանքների բերումով, որոնց համար Վարձակալը պատասխանատու չէ, Օբյեկտը

հարձել է օգտագործման համար ոչ պիտանի:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ՝

8.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները և լրացումները կողմերը քննարկում են մեկամսյա ժամկետում և ձևակերպում լրացուցիչ համաձայնագրերով՝ նոտարական վավերացմամբ:
8.2. Օբյեկտի (շենքերի, շինությունների) վրա արտաքին գովազդի և տեղեկատվության օբյեկտների տեղադրումն իրականացնում է Վարձակալը կամ նրա հետ համապատասխան պայմանագիր կնքած անձը՝ առանց Վարձատուի համաձայնության, եթե. ա/ այն չի հակասում սահմանված քաղաքաշինական կանոններին (կարգերին). բ/ չի առաջացնում հատուկ թույլտվության անհրաժեշտություն:
8.2. Կողմերի անվանման, գտնվելու վայրի, բանկային վավերապայմանների փոփոխման կամ վերակազմավորման դեպքում նրանք պարտավոր են երկշաբաթյա ժամկետում միմյանց գրավոր տեղեկացնել տեղի ունեցած փոփոխությունների մասին:

9. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ) `

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

ՎԱՐՁԱՏՈՒ՝

ՎԱՐՁԱՏՈՒԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՌԵԿՎԻԶԻՏՆԵՐԸ՝
Արարատբանկ ՓԲԸ

Հ/Հ 1510022686550100

ՎԱՐՁԱԿԱԼԻ ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ՝

Գեղարքունիք Սևան ք.
երկու հազար քսանմեկ թվականի հուլիսի ինն
Սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ ՀՀ «Գեղարքունիքի մարզ» նոտարական տարածքի նոտար ՎԱՐԴՈՒՀԻ ԲԱԲԻԿԻ ՍԱՐՈՅԱՆԻ կողմից: Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրը ստորագրած անձանց ինքնությունը, նրանց գործունակությունը, իրավաբանական անձի իրավունակությունը, ներկայացուցչի լիազորությունները և անշարժ գույքի նկատմամբ՝ «ՄԱՐՏՈՒՆՈՒ ՍԻԳՄԱ» ԲԲ ընկերության իրավունքները ստուգված են: «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի համաձայն սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից՝ նոտարական վավերացման օրվանից՝ երեսուն աշխատանքային օրվա ընթացքում:
ԳՐԱՆՑՎԱԾ Է ՍԵՂԱՆԱՄԱՏՅԱՆՈՒՄ՝ 2510-ով

Գանձված է պետական տուրք՝ հինգ հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասնհինգ հազար ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Վարդուհի Բաբիկի Սարոյան

ԾԵՆՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Էջ - 1



ՂԵԿԱՎԱՐ Ա.ԱՍԵՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ Գ.ՊԱՅԱՐՅԱՆ

„15" մարտ 2000թ.